ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ

h.718211
24-01-2023թ.
Նախընտրած ծանուցման ձևը՝
Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ *Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն*

Դիմող՝ *ԱՐԹՈՒՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ*
ՀՀ քաղաքացի
Հասցե՝ *ԱՐՄԱՎԻՐ, 0909, ԱՐՄԱՎԻՐ,*
ՄԱՇՏՈՑԻ Փ., 3բ շենք, 11
arevik7979@mail.ru : 37493352828

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն Մեղրյան.

25.03.2019 թվականին Հարկադիր կատարումն ապահովող ծառայության (այսուհետ նաև՝ վարձակալ) և իմ՝ անշարժ գույքի սեփականատերեր՝ Ստեփան Ալեքսանդրի Համբարձումյանի և Լարիսա Վոլոդյայի Պողոսյանի լիազորված անձ՝ Արթուր Խաչատրյանի միջև կնքվել է անշարժ գույքի տարածքի վարձակալության պայմանագիր, որի համաձայն՝ Վարձակալին տրամադրվել է ք.Արմավիր, Հանրապետության փողոց, 10ա հասցեում գտնվող անշարժ գույքից 179 քմ ընդհանուր մակերեսով տարածք:

Պայմանագրի 3.1 կետի համաձայն վարձավճարի չափը կազմում էր ամսական **120.000** ՀՀ դրամ:

Հաշվի առնելով , որ նշված տարածքում կատարվել են մի շարք բարելավումներ, անցկացվել գազաֆիկացում և ջեռուցման համակարգի տեղադրում՝ կողմերի միջև կնքվել է համաձայնագիր՝ <<անշարժ գույքի վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին>>: Համաձայնագրով փոփոխվել է ամսական վարձավճարի չափը և սահմանվել 01.04.2021 թվականից՝ **300.000** ՀՀ դրամի չափով, որը չի ներառում եկամտային հարկը:

26.04.2022 թվականին Վարձակալի և Վարձատուի համատեղ դիմումի համաձայն դադարեցվել է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության անվամբ 25.03.2019 թ. թիվ 1552 պայմանագրով գրանցված վարձակալության իրավունքը: Համաձայն լիազորագրի ամսական վարձավճարը փոխանցվել է իմ անվամբ ՎՏԲ-Հայաստան բանկի Արմավիրի մասնաճյուղում բացված 16009106571611 հաշվեհամարին:

Իմ և սեփականատերերի միջև օրերս կատարված մանրամասն հաշվարկի արդյունքում պարզվել է, որ ծառայության հետ կնքված վարձակալության դադարեցումից հետո վերջնական հաշվարկների փոխադարձ ակտը կնքվել է

սխալմամբ՝ առանց համատեղ մանրամասն հաշվարկի, և արդյունքում ինձ չի փոխանցվել վարձավճարից մոտ **360.000** ՀՀ դրամ։

Բանկային քաղվածքների մանրամասն ուսումնասիրման արդյունքում իմ կողմից հստակորեն պարզվել է նաև տարբերության գոյացման աղբյուրը (այն գոյացել է ծառայության կողմից 2021 թվականի ապրիլ և մայիս ամիսների համար ընդհանուր **600.000** ՀՀ դրամի փոխարեն՝ **240.000** ՀՀ դրամ փոխանցելու արդյունքում), այնինչ, համաձայնագրի 1.1.1 կետով ամրագրված է, որ 01.04.2021 թվականից վարձավճարի չափը սահմանվում է ամսական **300.000** ՀՀ դրամ։

Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում եմ Ձեր միջամտությունը վերահաշվարկ կատարելու և դրա արդյունքում **360.000** ՀՀ դրամ չվճարված գումարը փոխանցելու իմ անվամբ նույն հաշվեհամարին՝ սեփականատերերի հետ իմ կողմից վերջնական հաշվարկ կատարելու նպատակով։

Քանի որ հաշվարկն ակնհայտ պարզ է և որ այն պետք է նաև ամրագրված լինի ծառայության վճարման հանձնարարագրերով,ուստի ակնկալում եմ Ձեր կողմից հնարավորինս սեղմ ժամկետում վերականգնել կրածս նյութական վնասը։

Կանխավ հայտնում եմ շնորհակալությունս։

Հարգանքով՝

Դիմող՝

ԱՐԹՈՒՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ